# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«07» մայիսի, 2018թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Հովհաննես Ստեփանյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Լիլիթ Հովհաննիսյան** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Ասատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

**Գրիգոր Գաբրիելյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2018թ.-ի մայիսի 7-ին, ժամը 10:30-ին:

**2. Տեղեկություն՝ գնման առարկաների ընդհանուր գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Արտադրական հատուկ հագուստ | **240 000** |

**3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| Մասնակցի անվանումը (անունը) | Էլեկտրոնային փոստի հասցեն |
|---|---|
| «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ | derzak2013@mail.ru |
| «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ | elaam@bk.ru |

**4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«ԴԵՐՁԱԿ» և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**5. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

«ԴԵՐՁԱԿ» և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**6. <u>Մասնակիցների առաջարկած գները՝</u>**

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ | | |
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | **Արտադրական հատուկ հագուստ** | 266 400 (երկու հարյուր վաթսունվեց հազար չորս հարյուր) | 53 280 (հիսուներեք հազար երկու հարյուր ութսուն) | 319 680 (երեք հարյուր տասնինը հազար վեց հարյուր ութսուն) |

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ | | |
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | **Արտադրական հատուկ հագուստ** | 226 400 (երկու հարյուր քսանվեց հազար չորս հարյուր) | 45 280 (քառասունհինգ հազար երկու հարյուր ութսուն) | 271 680 (երկու հարյուր յոթանասունմեկ հազար վեց հարյուր ութսուն) |

**Հանձնաժողովը որոշեց.**

7. Ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը, ինչով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում առաջարկված գների նվազեցման նպատակով «ՊԵՐՖ» և «ՀԱԱՍՏԻԿ» ՍՊԸ-ների հետ վարելու միաժամանակյա բանակցություններ՝ Կարգի 40 րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովը որոշեց.

նիստը կասեցնել և բանակցություններ վարելու նպատակով հաջորդ նիստը հրավիրել 2018թ. մայիսի 14-ին՝ ժամը 11:00-ին, «ՀՀ պաշտպանական դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի վարչական շենքում (ք. Երևան, Վ. Սարգսյան 5):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ Ավետիք Ավագյան

Անդամներ՝

Հովհաննես Ստեփանյան

Էդգար Տոնոսկանյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Օֆելյա Ասատրյան